

ԿԻԼԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ  
ԻՐԱՎԻՃԱԿԸ 1320-1323 ԹԹ.

Ղ. Յ. ԹԻՆՈՅԱՆ

XIV դարի սկիզբը աննպաստ եղավ Կիլիկիայի հայոց պետականության համար: Երկրի արտաքին քաղաքական վիճակը փոքր-ինչ զեղարվեստական երանգներով, սակայն բավական դիպուկ նկարագրում է Մ. Սամուտոն, որը Կիլիկիայի չորս հարևաններին համեմատում է չորս գազանների հետ, որոնք հոշոտում են հայոց թագավորությունը<sup>1</sup>: Այդ հանգամանքը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ իլխանության հզորության անկման, եգիպտական և կարամանյան պետությունների օրավոր աճող ուժի, ինչպես նաև կիլիկյան դիվանագիտության ծախտողուններով: Այս ամենը նպաստեց երկրի ներքին կյանքում հակասությունների երևան գալուն ու խորացմանը: Կիլիկյան Հայաստանի ավագանին երկփեղկվեց հակադիր երկու խմբավորումների՝ միարարների ու նրանց ընդդիմադիրների, որը ճակատագրական նշանակություն ունեցավ պետական համակարգի համար: Այդ իրողությունը առավել ցայտուն դրսևորվեց Օշին թագավորի գահակալության շրջանում (1308-1320 թթ.), երբ 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովի ընդունած որոշումները խոր հակազդեցություններ երևան հանեցին ոչ միայն հոգևորականության և ազնվականության ստվար մասի, այլև, որն առավել նշանակալի է, հասարակ բնակչության մեջ: Ընդ որում, Կիլիկիայի հայոց պատմության մեջ դա հասարակության ցածր խավի կամ, ինչպես ընդունված է ասել, «երրորդ դասի» ընդվզման մեզ հայտնի առաջին փորձն էր, որը արքունիքը փորձում էր ճնշել ամենախիստ միջոցներով:

Օշինը ձգտում էր արևմուտքից ստանալ օգնություն՝ կանխելու պետությանը սպառնացող վտանգները: Բայց նրա ձեռնարկած քայլերը ապարդյուն էին: Եվրոպայից սպասվող օգնությունը ոչ միայն չստացվեց, այլև Օշինի կենդանության օրոք վերսկսվեցին հարևան մահմեդական պետությունների ավարառուական արշավանքները Կիլիկիա, որոնք հիմնականում պայմանավորված էին Եգիպտական սուլթանության հրահրումներով: Այսպես, XIII դարի երկրորդ կեսին արդեն Կիլիկիայի համար վտանգավոր հարևաններ դարձած կարամանյանները 1318 թ. արշավեցին և հասան մինչև Տարսոն, որտեղ Օշին Կռոնիկոսցուն հաջողվեց կանգնեցնել նրանց առաջխաղացումը և ջախջախել<sup>2</sup>: 1319 թ. մայիսին Հալեպի եմիրության զորքերը մի նոր արշավանք կազմակերպեցին և հասան մինչև Միս<sup>3</sup>: Եվրոպայի հետ Օշինի հարաբերությունները ոչ միայն լծորդվում էին քաղաքական ու դավանաբանական հարցերում, այլ նաև կապվում ամուսնություններով. այս առումով բնորոշ է Օշին թագավորի ամուսնությունը Հովհաննա Անժուացու հետ 1316 թ.<sup>4</sup>:

Չնայած պետության արտաքին քաղաքական վիճակը շտկելու ուղղությամբ Օշինի գործադրած ջանքերին՝ դրանք շոշափելի արդյունք չտվեցին: Այսպիսին էր քաղաքական

<sup>1</sup> Տե՛ս «Bibliothèque des croisades», par Michaud, h. 1, Paris, 1829, էջ 192:

<sup>2</sup> Տե՛ս Fr. Tournelze, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, էջ 648:

<sup>3</sup> Տե՛ս «Հեթոն Ախտոց տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները», հրապարակեց Մաթևոսյանը. «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 192:

<sup>4</sup> Ընդ որում, միջդինաստիական ամուսնությունները Կիլիկիայի հայկական ազնվականության և խաչակիրների միջև բավական տարածված են եղել (տե՛ս B. A. De Bourbon, Prince de Conde Lebanon's ten Armenian princesses (1186-1312), «Հայկազնան հայագիտական հանդես», 1977-78, h. 2):

իրավիճակը Կիլիկիայում, երբ 1320 թ. հունիսի 19-ին 33-ամյա Օշինը հանկարծամահ եղավ<sup>5</sup>:

Օշինի մահը լուրջ հետևանքներ ունեցավ թագավորության պետական վարչակարգի համար: Նախքան Հովհաննա Անժուացու հետ ամուսնանալը նա ամուսնացած էր Հեթում պատմիչ Կոռիկոսցու դստեր՝ Չաբել Կոռիկոսցու հետ, որից 1308 կամ 1309 թվականին Լևոն անունով արու զավակ էր ծնվել: Վերջինս հոր մահվան ժամանակ ընդամենը 11-12 տարեկան էր: Իրավիճակը մոտավորապես հիշեցնում էր 100 տարի առաջ տեղի ունեցած դեպքերը, երբ մահացավ Լևոն I արքան: Սակայն եթե այն ժամանակ Լևոն I -ի կազմած պետության խնամակալական խորհրդի կազմը փոփոխություններ չլրեց, ապա այժմ իրավիճակը փոքր-ինչ այլ զարգացումներ ունեցավ: Օշինի մահվանից առաջ խնամակալական խորհրդի կազմում ընդգրկվեցին Հեթում Նղրեցի ջամբուլայը (նույն ինքը՝ Հեթում Ախտուց տերը), Հեթում սենեսկալը, Օշին և Կոստանդին Կոռիկոսցիները: Խնամակալական խորհրդի կազմի վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանված տվյալները հակասական են: Բարսեղ Մաշկևորը և Սամուել Անեցու շարունակողը խնամակալական խորհրդի վերոհիշյալ երեք անդամների անուններն են նշում (քացառությամբ Հեթում սենեսկալի)<sup>6</sup>: Ղ. Ալիշանը հիշատակում է նրանցից չորսին՝ Օշին Կոռիկոսցուն, Հեթում ու Բալդուին Նղրեցիներին և Հեթում սենեսկալին<sup>7</sup>: Դարդեմ իր հերթին խոսում է Օշին ու Կոստանդին Կոռիկոսցիների և Հեթում ու Բալդուին եղբայրների մասին: Լանգլուան իր հերթին տալիս է Օշին Կոռիկոսցու, Հեթում ջամբուլայի ու Հեթում սենեսկալի անունները<sup>8</sup>: Կարծում ենք՝ առավել հավանական են Սամուել Անեցու շարունակողի և Բ. Մաշկևորի տվյալները, իսկ Բալդուին մարաջախտի՝ խորհրդի կազմի մեջ ընդգրկվելու փաստը հետագայի իրողություն է: Ինչ վերաբերում է Հեթում սենեսկալին, ապա նա խորհրդի կազմի մեջ է եղել Օշինի մահվան սկզբնական շրջանում<sup>9</sup>, որից հետո ինչ-ինչ պատճառով այդ կազմից դուրս է մնացել, ուստի և չի հիշատակվել հետագայում:

Անչափահաս թագաժառանգի և պետության խնամակալ է դառնում Օշին Կոռիկոսցին, որը հանգուցյալ Օշին թագավորի ամերորդին էր առաջին կնոջ կողմից: Խնամակալական խորհրդի մեջ է ընդգրկվում նաև Կոստանդինը՝ Օշին պայլի ավագ եղբայրը, որը միառժամանակ դառնում է պետության գումղատարը: Խորհրդի կազմի մեջ տեսնում ենք նաև Հեթում Նղրեցուն:

Ցավոք, Օշին թագավորի կենդանության օրոք Օշին Կոռիկոսցու ունեցած ազդեցության կամ դիրքի մասին որևէ տեղեկություն մեզ չի հասել: Հեթում I -ի արական ժառանգներից, բացի անչափահաս Լևոնից, ոչ ոք այլևս կենդանի չէր մնացել: Հեթումյաններից վերջինը՝ Օշին արքայի կրտսեր եղբայր Ալինախը, մահացել էր 1317 թ. առանց ժառանգ թողնելու: Սակայն Լևոն II թագավորի զավակներից դեռևս կենդանի էր վերջինը՝ Չաբելը, որը 1293 թ. ամուսնացել էր Կիպրոսի արքա Հուգո III-ի կրտսեր որդու՝ Անտրի դը Լուզինյանի հետ և նրա սպանությունից հետո (1310 թ.)<sup>10</sup> իր հինգ որդիների հետ ապաստանել էր Կիլիկիայում: Ընդ որում, Չաբելի դիրքերը հայոց արքունիքում մինչ այդ էլ բավական ամուր էին: Նրա առաջնեկը՝ դուստր Ազնեսը, ամուսնացել էր իր եղբորորդու՝ պատանի թագավոր Լևոն III -ի հետ: Օշինի մահվան ժամանակ նրա չորս որդիները՝ Գին, Հուգոն, Հենրի և Ջիվանը, արդեն չափահաս էին, ուստի և կարելի է կարծել, որ նա իր որդիների

<sup>5</sup> Տե՛ս «Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունը», էջ 192:

<sup>6</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սխուման, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 541, «Սամուելի քահանայի Անեցույ Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 121:

<sup>7</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սխուման, էջ 544:

<sup>8</sup> Տե՛ս V. Langlois, *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie*, St. Petersburg, 1860, էջ 57:

<sup>9</sup> Այդ է վկայում 1321թ. ստորագրված մի արտոնագիր, որից պարզ է դառնում, որ նա ևս ընդգրկված է եղել խորհրդի կազմում (տե՛ս V. Langlois, *La tresor des chartes d'Arménie*, Venise, Sainte Lazare, 1863, էջ 185):

<sup>10</sup> Տե՛ս Sir George Hill, *A History of Cyprus*, vol. Two, Cambridge, 1948, էջ 266:

հետև ևս բավական իրական ուժ էր գահաժառանգման և խնամակալական հարցերի լուծման համար: Այսպես, 1321 թ. թվագրվող ձեռագիր հիշատակարանում գրիչ Վահանը, ի թիվս Լևոն թագավորի, նշում է նաև Ջաբելին<sup>11</sup>, ինչը վկայում է Ջաբելի ունեցած մեծ ազդեցության մասին: Այստեղ, համծինս Լուզինյանների և Կոռիկոսցի պայլի, պետք է որ բախվեին նաև երկրի արտաքին քաղաքական երկու ուղղությունների ջատագովների շահերը: Եղած փաստերը վկայում են Ջաբելի և իր որդիների թե՛ կրոնական, թե՛ քաղաքական հարցերում եվրոպամետ ուղեգծի որդեգրման մասին: Այսպիսով, չնայած հավանական քաղաքական պայքարին՝ 1321 թ. դրությամբ հաղթող է դառնում Օշին Կոռիկոսցին, որն էլ իր ձեռքն է վերցնում պետության ղեկը: Մինչ Կիլիկիայում տեղի էին ունենում ներքին խմորումներ, արտաքին վտանգը ընդունել էր արդեն սպառնալի չափեր: Դեռ Օշին թագավորի կենդանության վերջին տարիներին սկսվեցին հարևան մահմեդական պետությունների գրեթե անընդմեջ հարձակումները, որոնք շարունակվեցին շուրջ երեք տարի: 1320 թ. Հալեպի էմիրի զորքերը միացած հարևան մահմեդական հպատակ էմիրությունների գորաջոկատներին, Եգիպտոսի սուլթան Մելիք - Ալ Նասրի գլխությամբ, գուցե և նրա իսկ հրահանգով ներխուժեցին Կիլիկիա: Մի շարք բնակավայրերի տիրելուց հետո նրանք հասան Սիս, և նրա մի մասը գրավելուց հետո վերադարձան: Նրանց մահանջի պատճառը բացատրվում է Ջահան գետն անցնելու ժամանակ կրած կորուստներով<sup>12</sup>: Էլ ավելի ծանր հետևանքներ ունեցավ նույն թվականի հուլիսին տեղի ունեցած արշավանքը: Տրիպոլիի էմիր Կարդայր, աջակցություն ստանալով Եգիպտական արքունիքից, քսանհազարանոց զորաբանակով ներխուժեց Կիլիկիա: Նա գրավեց Սսի արքայական պալատը, ավերածության ենթարկեց դեռ երկու ամիս առաջ ավերված Սսի մերձակայքը, այնուհետև ավերեց Մսիսը, Ադանան և Տարսոնի շրջակայքը: Ըստ արաբ պատմիչների՝ դրանից հետո եգիպտացիները մեծ ավարով վերադարձան<sup>13</sup>: Սմբատ գունդատարի շարունակողը եգիպտացիների՝ 1320 թ. արշավանքն ամփոփում է այսպես. «Ի թուին 759 կոտորեցին զօրքն Հայոց զօրսն Մսրայ առաջն Բարիքարկու եւ ի սահմանս Այասու, եւ խոցեալ յանօրինաց մեծ իշխանն տէր Կանչոյն պարոն Կիօղին եւ մեռաւ»<sup>14</sup>: Այս Կիօղինը Օշին Կոռիկոսցու երկրորդ եղբայրն էր<sup>15</sup>: Նրա մեծ իշխան հիշատակվելը վկայում է խոշոր ազնվականական պատկանելության մասին: Ամենևին հակված չենք պնդելու, թե հայկական զորքերին հաջողվել էր զլտովին ջախջախել հակառակորդին. առավել հավանական է, որ եգիպտացիները, զգալի կորուստներ կրելով, ստիպված են եղել վերադառնալ Սև լեռներից այն կողմ: Հենց այս ժամանակ վախճանվում է Օշին թագավորը, ինչն ավելի է խորացնում պետության քայքայումը: Հաջորդ՝ 1321 թ. ևս ծանր տարի էր Կիլիկիայի հայության համար: Հենց այդ ժամանակ Օշին Կոռիկոսցու և եղբոր՝ Կոստանդինի ու Լուզինյանների միջև խորացավ առճակատումը, որը իշխանական միջավայրում որոշ խժժությունների առիթ ծառայեց: 1321 թ. փետրվարի 1-ին տեղի ունեցավ Լևոն IV-ի թագադրության հանդեսը<sup>16</sup>: Այդ իրադարձությունից մի փոքր առաջ էլ Կոռիկոսցի եղբայրների և Լուզինյանների միջև մղվող պայքարում վերջնականապես հաղթեցին երկու պայլերը, և նույն օրը Լևոն IV-ը ամուսնացավ Օշին պայլի դստեր՝ Ալիծի հետ: Թագադրության և ամուսնության հանդեսներից հետո երկար չտևեց պայքարի հանգուցալուծումը. մեկ ամիս չանցած՝ 1321 թ. մարտի 3 -ին Ջաբելը ձերբակալվեց Այասում: Դրան հաջորդեց նրա չորս որդիների ձերբակալությունը

<sup>11</sup> Տե՛ս «ԺԴ Դարի հայերեն Չեռագրերի հիշատակարաններ», հ. I, կազմեց Լ. Խաչիկյանը, Եր., 1950, էջ 170:

<sup>12</sup> Տե՛ս «Արաբական արքյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Նալբանդյանը, Եր., 1965, էջ 246, տե՛ս նաև Գ. Ալիշան, Սիսուան, էջ 553:

<sup>13</sup> Տե՛ս «Արաբական արքյուրները Հայաստանի և հայերի մասին», էջ 284:

<sup>14</sup> «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 128:

<sup>15</sup> Տե՛ս «ԺԴ Դարի հայերեն Չեռագիր հիշատակարաններ», էջ 198:

<sup>16</sup> Տե՛ս «Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրություն», էջ 192:

(հինգերորդ որդին՝ Գին, գտնվում էր Բյուզանդիայում): 1323 թ. արդեն Չարելը և ավագ որդիները՝ Հուգոն և Հենրի, սպանվում են քանտում, իսկ կրտսեր զավակները՝ Ջիվանը և Բոհենմունդը, իշխանների խնդրանքով ազատ են արձակվում<sup>17</sup>: Դեռ նոր էին ավարտվել 1320 -1321թթ. խժոժությունները, երբ Աբու-Սալիդ խանի վեզիր Չոբանի որդի Թամուրդաշը՝ իլխանության Իկոնիայի տեղապահը, մեծ զորքով ասպատակեց Կիլիկիան<sup>18</sup>: Հակառակորդին դիմադրել չհաջողվեց: Ավելին, ամենայն հավանականությամբ Թամուրդաշին հաջողվել էր տիրել Սսին, քանզի մանկահասակ թագավորը ապաստանեց Այասում: Թամուրդաշը մեկ ամիս շարունակ ավերի ու կոտորածի մատնեց Կիլիկիան: Անշուշտ բավական տարօրինակ է, որ ոչ Սամուել Անեցու և ոչ Սմբատի շարունակողները և ոչ էլ ուրիշները չեն հիշատակում Օշին Կոռիկոսցուն, որն այդ դժվարին պահին ի պաշտոնե պետք է կանգնած լիներ երկրի պաշտպանության գլուխ: Մնում է ենթադրել, որ Օշինը կամ մանկահասակ արքայի պես ամրացել էր անառիկ քերդերից մեկում, կամ էլ իբրև խնամակալ գտնվում էր Լևոնի հետ: Սակայն Թամուրդաշի հարձակումը խորհրդանշական էր. բանն այն է, որ նա ի պաշտոնե Իկոնիայի տեղապահն էր և հարձակվելով մոնղոլ իլխանների նախկին դաշնակցի վրա՝ փաստորեն կտրում էր նախկինից եկող դաշնակցային ձևական կապերը: Այնուամենայնիվ, որքան էլ ավերիչ լինեին իկոնիացիների արշավանքները, դրանք ունեին սոսկ հետախուզական բնույթ: Աբուլ-Ֆեղան տեղեկացնում է, որ 1321 թ.՝ Կիլիկիա արշավելուց առաջ, Թամուրդաշը դեսպաններ է ուղարկում Եգիպտոս<sup>19</sup>: Ցավոք, նա ոչինչ չի ասում այդ այցելության նպատակների մասին, սակայն կարելի է ենթադրել, որ քննարկվել է նաև Կիլիկիայի դեմ համատեղ պայքարի հարցը: Եգիպտական հարձակմանը նախորդել է լրտեսական գործողությունների ծավալումը Կիլիկիայում, որի մասին վկայում է մատենագիր Բարսեղ Մաշկևորը. «Որպես տաճիկ լրտեսք՝ զգլխատոցն քակելով եւ վարսս կտրելով եւ զգեստս փոխելով, եւ լեզուս մերով խօսելով՝ թագուցանեն ձեռովն զթշմամթիւն. իսկ եթէ տանջանս ի վերայ հաստսցեն՝ վաղվադակի յայտնի թագուցեալն»<sup>20</sup>:

Եգիպտական արշավանքը սկսվեց 1322 թ. ապրիլին, որին, ըստ Ներսես Պալիանենցի, միայն հեծելազորից մասնակցում էին 40 հազար հոգի: Գերիշխում է այն կարծիքը, թե եգիպտացիների և նրա դաշնակիցների անընդմեջ ասպատակություններն ու ավարառությունները պայմանավորված էին օգնության խնդրանքով՝ Լևոն IV -ի՝ եվրոպական արքունիքներ դիմելով, որն էլ նյարդայնացնում էր հարևան մահմեդականներին<sup>21</sup>: Սակայն դժվար է համաձայնել այն մտքի հետ, որ Լևոն IV -ը, լինելով 11 -12 տարեկան պատանի, կարող էր կապեր ունենալ արևմտյան պետությունների հետ առանց Օշին պայլի գործուն մասնակցության: Օշին Կոռիկոսցին, անշուշտ, պահպանում էր կապեր Եվրոպայի և մասնավորապես Հռոմի պապի հետ, սակայն նրա քայլերը պետք է որ շատ զգուշավոր լինեին: Հակառակ Օշինի՝ հնարավոր է, որ այդպիսի քայլերի ժամանակին դիմած լիներ Չարելը, որը նույնպես մեծ հեղինակություն ուներ արքունիքում: Սակայն, ինչ չափավոր քայլեր էլ որ անեին ժամանակի հայ կառավարիչները, Եգիպտական սուլթանությանը ընդամենը առիթ էր հարկավոր տնտեսապես մրցունակ քրիստոնեական այս պետության ոչնչացման համար: Դա առավել տեսանելի եղավ 1322 թ. արշավանքի ժամանակ: Եգիպտական բանակի առաջին հարվածը, ինչպես և սպասվում էր, Այասի վրա եղավ: Այասը XIII դարի սկզբից և հատկապես դարի երկրորդ կեսից դարձել էր տարանցիկ առևտրի ճանապարհ, արևելյան ապրանքների դեպի արևմտյան երկրներ ուղևորման ծովային միակ խոշոր

<sup>17</sup> Տե՛ս Հովհանն Դարդեի, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 29:

<sup>18</sup> Տե՛ս «Սամուելի քահանայի Անեցոյ Հավաքմունքի ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 158, «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», էջ 128:

<sup>19</sup> Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», էջ 247:

<sup>20</sup> Դ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, Սբ. Ղազար, 1901, էջ 543:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Микаелян, История Киликийского Армянского царства, Ер., 1952, էջ 447:

քրիստոնեական կենտրոնը: Այսօր գերակայությունը մեծամուս էր մակայն պատճառով, որ հայ գահակալները XIII դարի երկրորդ կեսից հարկային և մաքսային նորանոր արտոնություններ էին սահմանում հատկապես վենետիկցի և ջենովացի առևտրականների համար: XIV դարի սկզբում Ալեքսանդրիայի դեմ Արևելյան Միջերկրածովի համար մղված առևտրային պայքարում Այասը հաղթող դարձավ, որի դեմ էլ ուղղվեց եգիպտական հերթական արշավանքի հիմնական նպատակը: Այսօր պաշարումը երկար չուներ: Սկսելով պաշարումը ապրիլի վերջին՝ մայիսի 4 -ին արդեն քաղաքի վերջին հենակետը՝ ծովային ամրոցը, եգիպտացիների ձեռքում էր<sup>22</sup>: Հատկանշական է, որ պաշարման ժամանակ օգնություն ստացվեց Կիպրոսի թագավորից, որը նոր էր հաշտվել հայոց թագավորի հետ<sup>23</sup>: Կիպրական գալերները, պաշարման սկզբից օգնության գալով Այաս, տեղի բնակիչներին տեղափոխեցին Կիպրոս կամ Կոռիկոս: Մակայն կարելի է կարծել, որ այդ օգնությունը ոչ այնքան Այասի հասարակ բնակչությանն էր ուղղված, որքան այդտեղ գտնվող եվրոպական, մակ կիպրական վաճառականությանը, քանզի այլ կարգի օգնություն Կիպրոսի թագավորի կողմից տեղի չի ունենում: Ինչևէ, Այասի ծովային ամրոցի անկումը Ներսես Պալիանենցը կապում է Կիպրոսից ստացված օգնության հետ<sup>24</sup>, քանզի մահանջողները, որոնք ամենայն հավանականությամբ Այաս քաղաքի բարձր խավի ներկայացուցիչներն էին, հեռանալով այրեցին բերդը, որին էլ այնուհետև տիրացան եգիպտացիները: Բերդի այրման իրողությունը հաստատում է մակ Աբուլ-Ֆեդան<sup>25</sup>: Ի մի բերելով եղած փաստերը՝ կարելի է պնդել, որ Այասում պետական մակարդակի պաշտպանության որևէ փորձ չի եղել: Իսկ որ քաղաքը կամ զոհն ամրոցը հնարավոր էր պահպանել, հաստատում է Ներսես Պալիանենցը: Նա դրանում անուղակիորեն մեղադրում է Կիպրոսի թագավորին բերդի պաշտպաններին մահանջի հնարավորություն տալու համար: Մակայն էթե բերդի պաշտպաններին հաջողվում է փրկվել, ապա քաղաքի բնակչությունը մեծ մասամբ գերեվարվում է: Եգիպտական զորքերը, գրավելով և ավերելով քաղաքը, ինչպես արաբ պատմիչն է նշում, «քանդեցին այն ինչքան որ կարողացան քանդել»<sup>26</sup>: Աբուլ-Ֆեդան նշում է, որ Այասը գրավելուց հետո իրենք վերադարձան Ասորիք<sup>27</sup>: Այնինչ Սմբատ Գունդստարբի շարունակողը գրում է, որ մրանք շարունակեցին արշավանքը Ջահան գետի ափերով դեպի հյուսիս: Մակայն հակառակորդի առաջխաղացումը կանգնեցվում է Մսիսի մոտ, որտեղ եգիպտացիների կայանատեղիի վրա են հարձակվում թագավորական զորքերը: Մարտի սկիզբը հաջող է լինում հայերի համար<sup>28</sup>, սակայն հետո բավական ծանրանում է. հայերը մեծ կորուստներ են կրում, զոհվում են Ջլկոնց ամրոցի տեր Հեթումը եղբոր՝ Կոստանդինի հետ, պարոն Վահրամ Լոտիկը, Օշին պայլի եղբոր՝ Կոստանդինի որդի Օշինը<sup>29</sup> և շատ ու շատ ասպետներ ու զինվորներ: Հայտնի չէ ճակատամարտի արդյունքը, սակայն կարելի է ենթադրել, որ եգիպտացիները ևս մեծ կորուստներ են ունեցել, քանզի արշավանքի շարունակության մասին տեղեկություն չունենք: Աբուլ-Ֆեդան մույնպես ոչինչ չի նշում այդ մասին, որը հիմք է տալիս կարծելու, որ եգիպտացիները անհաջողություն են կրել Մսիսի մոտ: Ըստ Ղ. Ալիշանի վկայության՝ թուրքմենները 1323 թ. կրկնեցին իրենց արշավանքը՝ գրավելով և ավերելով Մուլոնը. «Յիշաւ (ասպատակ) արարեալ զօրացն Թուրքաց զՄլունն զամէն առ հասարակ՝ ի մեծէ միչել ցփռոնս գերեաց, եւ իրով այրեաց...»<sup>30</sup>: Ալիշանը իր

<sup>22</sup> Տե՛ս «Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», էջ 247, տե՛ս մակ «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», էջ 129, Ղ. Ալիշան, Հայասպատում, էջ 532:

<sup>23</sup> Տե՛ս Sir George Hill, նշվ. աշխ., էջ 277:

<sup>24</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Հայասպատում, էջ 532:

<sup>25</sup> Տե՛ս «Արարական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», էջ 247:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Տե՛ս մույն տեղը:

<sup>28</sup> Տե՛ս «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», էջ 130:

<sup>29</sup> Տե՛ս մույն տեղը:

<sup>30</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 142:

կազմած ժամանակագրական ցանկում այդ արշավանքը վերագրում է եգիպտացիներին<sup>31</sup>, որը շփոթմունքի արդյունք է ընդամենը, քանի որ եգիպտացիները այդ ժամանակ չէին կարող հասնել երկրի արևմտյան շրջաններ: Մոլեռնի պես լեռնային ամրոցի անարգել գրավումը ևս խոսում է Հայոց թագավորության անմախսանձելի վիճակի մասին:

1323 թ. համեմատաբար նպաստավոր եղավ իր դաշնակիցների կողմից անուշադրության մատնված հայկական թագավորության համար: Անվտանգ դարձան Կիլիկիայի հյուսիսը և արևմտյան շրջանները: Բանն այն է, որ Թեմուրղաչը, ոգևորված իր հաջողություններով, ապստամբում է հենց իր տիրոջ՝ իլխան Աբու-Սայիդի դեմ, ու թեև իլխանությունը արդեն իր նախկին հզորությունը չուներ, այնուամենայնիվ Աբու-Սայիդը կարողացավ ջարդել Թեմուրղաչին: Իլխանը, սելջուկներով ու թաթարներով բնակեցված Թեմուրղաչին ենթակա տարածքներում նոր կառավարիչ նշանակելով, հեռացավ:

Հայկական պետության դրությունը բարելավվեց նաև միջազգային հարաբերություններում: Հռոմի Հովհաննես XXII պապը քանիցս դիմեց Աբու-Սայիդին՝ կոչ անելով օգնել մոնղոլների հետ դաշնակցային հարաբերությունների մեջ գտնվող Կիլիկիային<sup>32</sup>: Պապը նաև կոչ էր անում եվրոպական միապետներին նոր խաչակրաց արշավանք սկսել, որի գաղափարը դեռևս քնածում էր Եվրոպայում: Անշուշտ, Աբու-Սայիդը, որը մոնղոլական իլխանության վերջին գործը միապետն էր, լավ հասկանում էր իր պետական շահերը, որոնք նույնիսկ XIV դարի սկզբին պահանջում էին պաշտպանել Կիլիկիայի թագավորությունը օրավուր հզորացող Եգիպտական սուլթանությունից: Այս նկատառումով նա մոտ քսանհազարանոց զորամաս տեղավորեց իր պետության սահմանակից հյուսիսարևմտյան շրջաններում՝ իլխանության սահմանները պաշտպանելու համար, և ապա պատժիչ արշավանք կատարեց դեպի Ասորիք<sup>33</sup>: Այդ ուժերը պատրաստ էին հարկ եղած դեպքում օգնության հասնել հայոց թագավորությանը: Բայց դա հայ-մոնղոլական արդյունավետ դաշնակցության վերջին ակորդն էր, որը, լավ թե վատ, գործեց մինչև 1330-ական թթ. կեսերը՝ Աբու-Սայիդի մահը: Այնուամենայնիվ, մի վերջին անգամ հայ-մոնղոլական դաշինքը փրկեց Հայոց թագավորությունը անդառնալի կորուստներից: Հայոց արքունիքը օգնության խնդրանքով դիմում է նաև Բյուզանդական կառավարությանը<sup>34</sup>: Դատելով պատասխան մամակից՝ վերջինս նույնպես պատրաստակամություն է հայտնում օգնելու միջնորդության հարցում: Փաստորեն Եգիպտական սուլթանությանը, որը գրկվել էր իր դաշնակից Թեմուրղաչից Փոքր Ասիայում, դեռևս հզոր իլխանության և Եվրոպայի սպառնալից վերաբերմունքի ու կոչերի պայմաններում ոչինչ չէր մնում, քան համաձայնել Աբու-Սայիդի՝ հաշտության մասին միջնորդության առաջարկի հետ:

Կիլիկիայի թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև հաշտությունը կնքվում է 1323 թ. Կահիրեում: Այն ստորագրում է 1322 թ. կաթողիկոս ընտրված Կոստանդին Լամբրոնացին, որին Հալեպում, ապա և Կահիրեում ընդունում են մեծ պատիվներով: Հաշտությունը առերևույթ բավական բարենպաստ էր հայկական պետության համար: Այն ոչ միայն տարածքային կորուստներ չէր ունենում, այլև սուլթանությունը պարտավորվում էր սեփական միջոցներով վերականգնել այն բոլոր ամրոցներն ու ամրությունները, որ ավերվել էին Կիլիկիայում եգիպտական ներխուժման հետևանքով: Պետք է նշել, որ Եգիպտոսի սուլթան Մելիք Նասրըր ևս որոշ ձեռքբերումներ է ունենում:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 558:

<sup>32</sup> Կիլիկիան, որպես իլխանությանը հարկատու երկիր, ամեն տարի վճարում էր 30000 դինար (տե՛ս Գ. Ա. Димитриев, *Поземельные отношения в Киликийской Армении*, ՊԲՀ, 1970, № 2, էջ 116):

<sup>33</sup> «Յայն ամի էջ խանն Խազան քազում եւ անթիւ գաւրաք յաշխարհն որ կոչի Շամբ, զի սոքաք հատուսէց Աստուած զչարիս Իսմայելացոցն ի գլուխ իւրեանց առնուլ զվրեժ սրբութեան իւրոյ», «Յուցակ հայերեմ ձեռագրաց Մատենադարանի ի Վիեննա», կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 790:

<sup>34</sup> Տե՛ս Հ. Բարթիկյան, *Հայ-բյուզանդական հետազոտություններ*, Եր., 2002, էջ 651:

Նախ՝ վերականգնվող քերդերի և ամրությունների մեջ քացառություն էին արվում Այասի ամրությունները, որոնց վերականգնումից եգիպտացիները հրաժարվում են: Կնքված պայմանագրով հայերը պարտավորվում են 1.200 000 դիրհեմ ամենամյա հարկ տալ: Այն կազմում էր Այասի եկամուտների մոտ 50% -ը: Հարկի այս շափը մեծ հարված էր Կիլիկիայի ողջ տնտեսական համակարգին:

Թե երկիրը ինչքան էր տուժել անընդմեջ արշավանքների հետևանքով, երևում է Բարսեղ Մաշկեղի վարդապետի թողած հիշատակարանից. «Տէր խնամեսցէ զսակաւ ինչ մնացեալքս՝ սիրով եւ գործեամբ, եւ աճեցուցէ եւ բազմացուցէ առաւել քան զչափն առաջին, եւ արասցէ մեզ դարձեալ տեսանել զաւերական եւ զամնարդարեակսն՝ վերստին շինեալ եւ լցեալ բազում բնակչօք, մինչ զի ասիցեն՝ թէ, Նեղ է մեզ տեղիս, ընդարձակեսցուք...»<sup>35</sup>:

Այսպիսով, քաղապահական խորհրդի կառավարման առաջին տարիներին թեև հայոց քաղաքապետությանը բնորոշ էին ներքին անկայունությունն ու արտաքին վտանգների ուժգնացումը, այնուհանդերձ հայոց ավագանուն հաջողվեց դիվանագիտական նուրբ հնարքներով հաղթահարել ճգնաժամը՝ մի քանի տասնամյակով ևս երկարաձգելով պետության կենսունակությունը:

**Д. Ф. ТИНОЯН - *Внутреннее и внешнее положение Киликии в 1320-1323 годах.*** - В истории Киликийского армянского царства особое значение имели первые годы правления регентского совета при малолетнем Левоне IV (1320-1323). Смерть царя Ошина серьезно ослабила военно-политическое положение царства. Армяно-монгольский союз переживал агонию, западные страны фактически не были заинтересованы помочь Киликии, довольно напряженными были отношения как с Кипром, так и орденом госпиталиеров, ситуация осложнялась внутривосточной напряженностью в правящих кругах Киликии, а также набегами караманцев. Одновременно египетский султанат стремился уничтожить невыгодного мамелюкам торгового соперника, что и стало основной причиной армяно-египетской войны в 1321-1323 годах. Тем не менее, армянскому двору удалось преодолеть и внутривосточные и внешнеполитические трудности. За короткое время были прекращены внутривосточные распри, улучшились отношения с Кипрским королевством. Но самыми важными стали дипломатические успехи в отношениях с византийским, папским и ильханским дворами, которые способствовали тому, что в армяно-египетской войне киликийцы обошлись минимальными потерями.

<sup>35</sup> Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 536: